ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

375010, ք.Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
375010, г.Ереван, пл.Республики,
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 323200
www.mud.am
E-mail: info@mud.am

13.08.12 N 03/13.1/4093-12

Ձեր N ---------- ամսի ----------

ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի,
"Շիրակ կենտրոն" հասարակական
կազմակերպության նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին ուղղված Ձեր 2012 թվականի հուլիսի 31-ի դիմում-առաջարկում բարձրացված՝ աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանների տրամադրման գործընթացը կարգավորող ՀՀ կառավարության որոշումներում անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ ներկայացված առաջարկությունները քննարկվել են ՀՀ նախագահին և ՀՀ վարչապետին ուղղված Ձեր 2012 թվականի հուլիսի 31-ի նույնաբովանդակ դիմում-առաջարկի համաձայն, և քննարկման արդյունքների մասին Ձեզ տրվել են պարզաբանումներ 2012 թվականի օգոստոսի 23-ի N03/13.1/4074-12 գրությամբ (պատճենը կցվում է):

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով

Ա.Հակոբյան

Ե.Սրբյան
52-46-80

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

375010 ք.Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
375010, г.Ереван, пл.Республики,
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 523200
www.mud.am
E-mail: info@mud.am

23.08.12 N 03/13.1/4074-12

Ձեր N ———— աս ————

ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի,
"Շիրակ կենտրոն" ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Հայաստանի Հանրապետության նախագահին ուղղված, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի 2012 թվականի օգոստոսի 14-ի N Ղ-1393 գրությամբ, ինչպես նաև ՀՀ վարչապետին ուղղված, ՀՀ վարչապետի 2012 թվականի օգոստոսի 3-ի N02/24.3/10972-12 ու օգոստոսի 17-ի N02/24.3/11604-12 հանձնարարականներով ՀՀ քաղաքաշինության նախարարություն վերահասցեագրված և ՀՀ քաղաքաշինության նախարարին ուղղված Ձեր 2012 թվականի հուլիսի 31-ի նույնաբովանդակ դիմում-առաջարկներում բարձրացված՝ աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանների տրամադրման գործընթացը կարգավորող ՀՀ կառավարության որոշումներում անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Ձեր առաջարկությունների կապակցությամբ հայտնում եմ.

1. *Մեկ ժամանակավոր կացարան տնօրինող բազմանդամ ընտանիքներին առանց տնակը քանդելու նոր ստացած բնակարանը սեփականաշնորհելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ՝*

Նախարարության տրամադրության տակ գտնվող տեղեկատվության համաձայն՝ Գյումրի քաղաքում պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շրջանակներում բնակարան ստացած ընտանիքների ընդհանուր թվից մեկ տնակ զբաղեցրած բազմանդամ ընտանիքների թիվը կազմում է 87, որոնցից 50-ը կամ մոտ 58%-ը բնակարան ստանալուց հետո արդեն իսկ քանդել են իրենց կողմից զբաղեցված ժամանակավոր կացարանները (տնակները):

Այդ պարագայում, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում առաջարկվող փոփոխությունների կատարումը կբերի ծրագրի շրջանակներում միասնական մոտեցումների կիրառման սկզբունքի խախտմանը, մասնավորապես. բնակարանը ստանալուց հետո իրենց կողմից զբաղեցված ժամանակավոր կացարանները (տնակները) քանդած բազմանդամ ընտանիքների նկատմամբ, ինչը տեղիք կտա նրանց դժգոհությունների:

2. *Ընտանիքի որոշ անդամների կողմից փաստաթղթեր չներկայացնելու դեպքում մասնակի համալրված փաստաթղթային փաթեթ ունեցող ընտանիքներին բնակբաշխման գործընթացին մասնակցելու հնարավորություն ընձեռելու, իսկ ընտանիքի փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվող անդամներին բնակարան ստանալու իրավունքից զրկելու վերաբերյալ*

Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով հաշվառված և Գյումրի քաղաքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու հավակնող ընտանիքների կողմից ամբողջական փաստաթղթային փաթեթների ներկայացման ժամկետ սահմանելու, ինչպես նաև ընտանիքի որոշ անդամների կողմից փաստաթղթեր չներկայացնելու պարագայում մասնակի համալրված փաստաթղթային փաթեթ ունեցող ընտանիքներին բնակբաշխման գործընթացին մասնակցելու հնարավորություն ընձեռելու, իսկ ընտանիքի փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվող անդամներին բնակարան ստանալու իրավունքից զրկելու հարցերը քննարկվել են աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի դեռևս 2011 թվականի հուլիսի 13-ին Գյումրի քաղաքում կայացած նիստում՝ Ձեր մասնակցությամբ:

Արդյունքում, Գյումրի քաղաքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների բաշխման գործընթացի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով << կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N1329-Ն որոշմամբ սահմանվել է ծրագրի շրջանակներում բնակարան ստանալուն հավակնող ընտանիքների կողմից նրանց ընտանիքի անդամներին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերով համալրված փաթեթների ներկայացման վերջնաժամկետ՝ 2011 թվականի նոյեմբերի 1-ը:

Իսկ ընտանիքի որոշ անդամների վերաբերյալ անհրաժեշտ հիմնավոր փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության հետ կապված հարցի կարգավորման նպատակով դեռևս 2010 թվականին << կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետում կատարվել է համապատասխան լրացում:

3. *Անօթևանների հերթացուցակում հաշվառման և վերահաշվառման ժամանակ Հայաստանից ժամանակավորապես բացակայելու և տարաբնույթ այլ պատճառներով հաշվառումից դուրս մնացած ընտանիքներին բնակբաշխման գործընթացին մասնակցելու հնարավորություն տալու վերաբերյալ՝*

Ներկայումս աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակապահովմանն ուղղված ծրագրերն իրականացվում են << կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ հայեցակարգի դրույթներով ձևավորված պարտավորությունների շրջանակներում:

Անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի արդյունավետության ապահովման նպատակով անօթևան ընտանիքների հաշվառման վերաբերյալ հստակ տեղեկատվություն ունենալու համար, հաշվի առնելով ժամանակի ընթացքում հաշվառված ընտանիքների թվի հնարավոր փոփոխությունները,

ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N1024-Ն որոշմամբ քաղաքային բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերահաշվառման վերջնաժամկետ է սահմանվել 2008 թվականի նոյեմբերի 1-ը և ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1337-Ն որոշմամբ աղետի գոտու գյուղական բնակավայրերում՝ 2008 թվականի դեկտեմբերի 15-ը:

Ընդ որում, այդ ժամկետում սահմանված կարգով դիմում չներկայացրած անձանց նկատմամբ աղետի գոտու բնակավայրերում բնակարանների արտահերթ հատկացման մասով պետական աջակցության ցուցաբերման պարտավորությունները համարվում են կատարմամբ դադարեցված:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սակայն Հայաստանի Հանրապետությունից ժամանակավորապես բացակայելու և այլ պատճառներով հաշվառումից դուրս մնացած ընտանիքների անօթևանների ցուցակում ընդգրկելու և կորցրած բնակարանի դիմաց փոխհատուցումից օգտվելու հնարավորություն ընձեռնելու հարցի քննարկմանը հնարավոր է անդրադառնալ վերը նշված հայեցակարգով երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով բնակարան արտահերթ ստանալու համար հաշվառված անձանց բնակապահովման նկատմամբ ձևավորված պարտավորությունները կատարելուց հետո:

4. *Անօթևանների հերթացուցակում հաշվառված և երկրաշարժի հետևանքով անհատական բնակելի տուն կորցրած, ինչպես նաև նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվի չափով կամ ավել բնակարան ստացած 277 ընտանիքներին բնակեցման գործընթացին մասնակցելու հնարավորություն տալու վերաբերյալ՝*

աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում պետական աջակցության ուղղությունները և առաջնահերթությունները ամրագրվել են ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի N23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգով: Ընդ որում, քաղաքային բնակավայրերում պետական աջակցության շրջանակներում առաջնահերթ կարգով նախատեսված է անդրադառնալ պետական սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած, սահմանված կարգով հաշվառված այն ընտանիքներին, որոնք և որոնց ընտանիքների մի մասը նախորդ տարիներին իրականացված աղետի գոտու վերականգնման ծրագրերի շրջանակներում չեն ստացել բնակարան նախկինում զբաղեցրած բնակարանի (սենյակների թվով) չափով:

Անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած և նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվի չափով կամ ավել բնակարան ստացած ընտանիքները ծրագրի շահառու չեն հանդիսանում:

Նշված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հարցին հնարավոր է անդրադառնալ վերը նշված հայեցակարգով ձևավորված պարտավորությունները կատարելուց հետո՝ աղետի գոտու բնակավայրերում առկա նմանատիպ խնդիրների լուծմանն ուղղված իրականացվելիք ծրագրերի շրջանակներում՝ այդ ուղղությամբ ՀՀ տարեկան պետական բյուջեներով միջոցներ նախատեսելու դեպքում:

5. *Գյումրու երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների հերթացուցակում հաշվառված և բնակեցման հանձնաժողովի կողմից 4-սենյականոց բնակարանի շահառու ճանաչված, 8 և ավել անձից բաղկացած ընտանիքներին մեկ 4-սենյականոց բնակարանի փոխարեն երկուական բնակարան հատկացնելու վերաբերյալ՝*

Նշված հարցը կարգավորված է ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N432 որոշման 16-րդ կետով:

Գյումրի քաղաքում լրացուցիչ կառուցվելիք բնակարաններից 4-սենյականոց բնակարանների թիվը կորոշվի ներկայումս անհրաժեշտ փաստաթղթերով համալրման ենթակա փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության արդյունքներով:

6. *Աղետի գոտում պետության կողմից բնակարանային փոխհատուցման ոչ ենթակա, կիսախարխուլ շենքերում, մասնավորապես նախկին հանրակացարաններում բնակվող անօթևան ընտանիքներին ժամանակավոր կացարաններով ապահովելու անհրաժեշտության վերաբերյալ՝*

հաշվի առնելով, որ Գյումրի քաղաքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման խնդրի հետ մեկտեղ լուծվում են նաև քաղաքի զարգացման տեսանկյունից կարևորվող տարածքները տնակային տնտեսություններից ազատման հետ կապված հարցերը, Ձեր գրությամբ ներկայացված՝ կիսախարխուլ շենքերում, մասնավորապես նախկին հանրակացարաններում բնակվող անօթևան ընտանքներին ժամանակավոր կացարաններով ապահովելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկությունն ընդունելի չէ:

Կիսախարխուլ շենքերում և վթարային հանրակացարանում բնակվող ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման հարցին հնարավոր է անդրադառնալ հետագա տարիներին՝ հանրապետության բնակավայրերում առկա նմանատիպ հարցերի քննարկման ժամանակ:

7. *Բնակբաշխման վիճակահանություններն առավել թափանցիկ դարձնելու նպատակով ՀՀ կառավարության բնակբաշխման կարգը սահմանող որոշումներում կատարել լրացում՝ ՀՀ պետբյուջեի միջոցների հաշվին վիճակահանությունների ամբողջական տեսաձայնագրման և ուղիղ հեռարձակման, ինչպես նաև վիճակահանությունների ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում տեսաձայնագրությունները ՀՀ քաղաքաշինության վեբ կայքում տեղադրման մասին:*

ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N1402-Ն որոշման 3-րդ կետի դրույթների համաձայն՝ բնակեցման ենթակա բազմաբնակարան շենքերի բնակարանները բաշխվում են վիճակահանությամբ՝ ըստ սենյակների թվի՝ նույնատիպ բնակարաններ ստանալու հավակնող անձանց միջև:

Վիճակահանությունները անցկացվում են լրատվական միջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է նախարարության պաշտոնական կայք էջում:

Ելնելով վերը շարադրվածից հայտնում եմ, որ աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանների տրամադրման գործընթացը կարգավորող ՀՀ կառավարության որոշումներում առաջարկվող լրացումների և փոփոխությունների կատարումը գտնում ենք աննպատակահարմար:

Հարգանքով

Ա.Հակոբյան

Ե.Աթայան
52-46-80